


Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի համաձայն

Տուժածների իրավունքները

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE



Մարդկանց թրաֆիքինգը՝ մարդու իրավունքների խախտում է և Եվրոպայում և նրա սահմաններից դուրս: Աճում է կանանց, տղամարդկանց և երեխաների վաճառքը որպես ապրանք, թե սեփական երկրում, թե նրա սահմաններից դուրս՝ զցելով նրանց շահագործման ու չարաշահման ծուղակը:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի, որն ուժի մեջ է մտել 2008թ փետրվարի 1-ից, նպատակն է՝

- մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը,
- թրաֆիքինգից տուժածների պաշտպանությունը,
- թրաֆիքինգով զբաղվողների քրեական հետապնդումը,
- ազգային գործողությունների համակարգման և միջազգային համագործակցության քաջալերումը:

Կոնվենցիան տարածվում է՝

- թրաֆիքինգի բոլոր ձևերի վրա, լինեն դրանք ազգային կամ անդրազգային, կազմակերպված հանցավորության հետ կապ ունեցող կամ չունեցող,
- թրաֆիքինգից բոլոր տուժածների վրա (կանանց, տղամարդկանց և երեխաների),
- շահագործման բոլոր ձևերի վրա (սեռական, հարկադիր աշխատանք կամ ծառայություններ, ստրկություն կամ ստրկությանը հավասարազոր վիճակ, տաժանակիր աշխատանքներ, մարդկային օրգանների հեռացում):

Կոնվենցիայի կարևորագույն արժեքը կայանում է նրանում, որ ուշադրության կենտրոնում են գտնվում մարդու իրավունքները և տուժածների պաշտպանությունը: Կոնվենցիան թրաֆիքինգը սահմանում է որպես մարդու իրավունքների խախտում և մարդկային արժանապատվության և անձեռնմխելիության ոտնահարում: Դա նշանակում է, որ երկրների իշխանությունները պատասխանատվություն են կրում եթե նրանք չեն ձեռնարկում քայլեր մարդկանց թրաֆիքինգը կանխարգելու, թրաֆիքինգից տուժածներին պաշտպանելու և թրաֆիքինգի դեպքերը արդյունավետ հետաքննելու համար:

Մարդկանց թրաֆիքինգը համաշխարհային երևույթ է, որը չի ճանաչում սահմաններ, այդ իսկ պատճառով կոնվենցիան կիրառելի և հասանելի է բոլոր երկրների համար:



Ո՞ՎՔԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՏՈՒԺԱԾՆԵՐ

Յուրաքանչյուր ոք կարող է դառնալ թրաֆիքինգի տուժած՝ կանայք, տղամարդիկ և երեխաներ, անկախ տարիքից և սոցիալական վիճակից: Մարդիկ, ովքեր դառնում են թրաֆիքինգի տուժած, հարկադրված են տրամադրել սեռական ծառայություններ, աշխատել չնչին վճարի դիմաց կամ անվճար, կամ ենթարկվել օրգանների հեռացմանը: Շահագործումը հաճախ ուղեկցվում է ֆիզիկական և էմոցիոնալ բռնությամբ և սպառնալիքներով տուժածների և նրանց հարազատների նկատմամբ:

Կոնվենցիայի համաձայն մարդկանց թրաֆիքինգի տուժած է համարվում այն անձը, ով՝ տեղափոխվել, հավաքագրվել, փոխանցվել, պարտակվել կամ ընդունվել է երկրի ներսում կամ նրա սահմաններից դուրս, ենթարկվել է սպառնալիքների, ուժի կիրառման, խաբեության, բռնության կամ այլ ապօրինի միջոցների, շահագործման նպատակով:

Երեխան համարվում է մարդկանց թրաֆիքինգի տուժած անկախ իր հանդեպ կիրառվող եղանակներից լինի դա հավաքագրում, տեղափոխում, փոխանցում,պարտակում կամ ձեռքբերում շահագործման նպատակով:

Անձի «համաձայնությունը» շահագործմանը ենթարկվելուն որևէ նշանակություն չունի երբ կիրառվել է եղնակներից որևէ մեկը (հարկադրանք, խաբեություն, խոցելի վիճակի չարաշահում և այլն): Ավելին, անձը համարվում է թրաֆիքինգի տուժած անգամ այն դեպքում, երբ շահագործումը դեռևս տեղի չի ունեցել, բայց նրա նկատմամբ կիրառվել են գործողություններ վերընշված եղանակների օգտագործմամբ:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՏՈՒԺԱԾԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ

Նույնականացում

Թրաֆիքինգից տուժածները պետք է պաշտոնապես նույնականացվեն, որպեսզի նրանց չվերաբերվեն անօրինական միգրանտների կամ հանցագործների պես: Նույնականացումը իրականացվում է հատուկ ուսուցում ստացած մասնագետների կողմից (ոստիկանության աշխատակիցներ, սոցիալական աշխատողներ, աշխատանքային տեսուչներ, բժիշկներ, աջակցություն տրամադրողներ և այլն), որոնք պահպանում են համապատասխան ընթացակարգերը և ինքնության հաստատման չափորոշիչները:

Վերականգնման և մտորման ժամանակահատված

Դեռևս նախքան տուժածների պաշտոնապես նույնականացումը, նրանք իրավունք ունեն ստանալու նվազագույնը 30 օր տևողությամբ ժամանակահատված վերականգնվելու , թրաֆիքինգով զբաղվողների ազդեցությունից ձերբազատվելու և մտորելու հանցագործության հետաքննության նպատակով իշխանությունների հետ համագործակցելու մասին: Այդ ժամանակահատվածում նրանք չեն կարող վտարվել երկրից և ունեն աջակցություն ստանալու իրավունք, անգամ եթե նրանց գտնվելը երկրում անօրինական է:

Աջակցություն

Անկախ այն բանից, թե արդյոք թրաֆիքինգի տուժածները պատրաստ են համագործակցելու քրեական հետաքննությանը, կամ հանդես գալ որպես վկաներ, նրանք իրավունք ունեն՝

- պատշաճ և ապահով կացարանի
- հոգեբանական աջակցության
- նյութական աջակցության
- բժշկական շտապ օգնությունից օգտվելու
- գրավոր և բանավոր թարգմանության
- խորհրդատվություն և տեղեկատվություն ստանալու
- քրեական գործի հետաքննության ժամանակ աջակցության
- աշխատելու, մասնագիտական ուսուցման և կրթության, եթե նրանք օրինական են գտնվում այդ երկրում:

Իրավական աջակցություն

Թրաֆիքինգի տուժածներն իրավունք ունեն տեղեկատվություն ստանալու իրենց իրավունքների և բոլոր համապատասխան ընթացակարգերի վերաբերյալ նրանց հասկանալի լեզվով: Նրանք ունեն նաև իրավական աջակցության և անվճար իրավաբանական օգնության իրավունք՝ որոշակի պայմանների առկայության դեպքում:

Կացության թույլտվություն

Տուժածներին կարող է տրրամադրվել երկարաձգվող կացության թույլտվություն, երբ նրանց գտնվելը պետության տարածքում կապված է նրանց անձնական բնույթի հանգամանքներից կամ անհրաժեշտ է հանցագործությունների քննության ընթացքում իրավասու մարմինների հետ համագործակցության համար: Կացության թույլտվության տրամադրումը չի հակասում ապաստան փնտրելու նրանց իրավունքին:

Մասնավոր կյանքի և ինքնության պաշտպանություն

Տուժածների անձնական տվյալները չեն կարող հրապարակվել և պետք է պահպանվեն միայն որոշակի օրինական նպատակների համար: Դրանք չպետք է օգտագործվեն որևէ կերպ, ինչը թույլ կտա բացահայտելու նրանց ինքնությունը:

Պաշտպանություն հետաքննությունների և դատավարությունների ժամանակ

Տուժածներին և նրանց ընտանիքի անդամներին, անհրաժեշտության դեպքում, կտրամադրվի պաշտպանություն թրաֆիքինգով զբաղվողների հնարավոր վրեժխնդրությունից կամ ահաբեկումից: Այն կարող է ներառել ֆիզիկական պաշտպանություն, բնակության վայրի փոփոխություն, ինքնության փոփոխություն և աջակցություն աշխատանք գտնելու հարցում:

Փոխհատուցում

Թրաֆիքինգից տուժածներն ունեն ֆինանսական փոխհատուցում ստանալու իրավունք այն վնասների համար, որ նրանք կրել են թրաֆիքինգով զբաղվողների կողմից: Այս փոխհատուցումը կարող է տրվել կամ դատարանի՝ թրաֆիքինգով զբաղվողների ունեցվածքի բռնագրավումից հետո, կամ այն պետության կողմից, որտեղ տեղի է ունեցել շահագործումը:

Հայրենադարձություն և վերադարձ

Տուժածների հայրենիք վերադարձը իրականացվում է հաշվի առնելով նրանց իրավունքները, ապահովությունն ու արժանապատվությունը, ինչպես նաև տուժածի հետ առնչվող ցանկացած իրավաբանական գործընթացը: Վերադառնալուց հետո նրանց պետք է առաջարկվի վերաինտեգրման աջակցություն, ինչպես օրինակ՝ կրթություն ստանալու և աշխատանք գտնելու հարցում:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԹՐԱՖԻՔԻՆԳԻՑ ՏՈՒԺԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ի հավելումն վերը նշված իրավունքների, որոնք տարածվում են բոլոր թրաֆիքինգից տուժածների վրա, երեխաներն օգտվում են հետևյալ հատուկ իրավունքներից.

- չուղեկցվող երեխայի համար նշանակվում է օրինական խնամակալ, ով ներկայացնում է նրան և գործում ելնելով երեխայի լավագույն շահերից,
- քայլեր են ձեռնարկվում երեխայի անձը և ազգությունը հաստատելու համար, և եթե դա բխում է երեխայի լավագույն շահերից՝ հայտնաբերելու նրա ընտանիքը,
- երբ հնարավոր չէ ստույգ պարզել տուժածի տարիքը, բայց հիմքեր կան հավատալու, որ նա 18 տարեկանից փոքր է, ապա անձը համարվում է երեխա և նրան ապահովում են պաշտպանության հատուկ միջոցներով՝ մինչ նրա տարիքի ճշտումը,
- երեխաներն ունեն կրթություն և աջակցություն ստանալու իրավունք, որոնք հաշվի են առնում նրանց կարիքները,
- ռիսկերի և անվտանգության գնահատումը կատարվում է մինչ հայրենադարձությունը, որը տեղի է ունենում միայն եթե դա բխում է երեխայի լավագույն շահերից,
- հետաքննությունների և դատավարությունների ընթացքում երեխաներն օգտվում են պաշտպանության հատուկ միջոցներից:





Ի՞ՆՉ Է ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԸ

Կոնվենցիան մարդկանց թրաֆիքինգը սահմանում է որպես երեք տարրերի համադրություն՝

- գործողություն. անձանց հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, պարտակում կամ ձեռք բերում,
- որոշակի միջոցների կիրառմամբ. ուժի կամ հարկադրանքի որևէ այլ ձևի կիրառում կամ դրա սպառնալիք, առևանգում, խարդախություն, խաբեություն, իշխանության կամ վիճակի խոցելիության չարաշահում, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելը կամ ստանալը,
- շահագործման նպատակով. նվազագույնը՝ այլ անձանց մարմնավաճառության կամ սեռական այլ շահագործումը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր վիճակը, տաժանակիր աշխատանքները կամ մարդկային օրգանների հեռացում:

Ո՞ՐՆ Է ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ և ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋև

Եթե մարդկանց մաքսանենգությունը դա մարդկանց անօրինական սահմանահատումն է ֆինանսական կամ այլ նյութական շահի ձեռք բերման նպատակով, ապա մարդկանց թրաֆիքինգի նպատակը շահագործումն է: Բացի այդ, մարդկանց թրաֆիքինգն անպայման չէ, որ ներառում է սահմանի հատում, այն կարող է տեղի ունենալ և երկրի ներսում:



ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Եվրոպայի խորհրդի կոնվենցիան ստորագրած բոլոր երկրները պարբերաբար մոնիտորինգի են ենթարկվում Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի (GRETA) կողմից: GRETA-ի խնդիրն է ապահովել, որպեսզի կոնվենցիայի դրույթներն արդյունավետ կերպով իրականացվեն և հարգվեն տուժածների իրավունքները:

GRETA-ն վերլուծում է իրավիճակը երկիր առ երկիր հիմունքով, կազմելով զեկույցներ, որոնցում բացահայտում է լավագույն փորձն ու բացթողումները և տալիս հանձնարարականներ, թե ինչպես է կարելի բարելավել կոնվենցիայի իրականացումը յուրաքանչյուր երկրում: Զեկույցները և հանձնարարականները դառնում են հանրային և հրապարակվում են Եվրոպայի խորհրդի թրաֆիքինգի դեմ պայքարի կայքում.

Կոնտակտների և լրացուցիչ տեղեկատվության համար

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի քարտուղարություն (GRETA և Կոնվենցիային անդամ պետությունների կոմիտե)
Եվրոպայի խորհուրդ / Council of Europe
F-67075 Strasbourg Cedex
Ֆրանսիա / France
E-mail: Trafficking@coe.int

www.coe.int/trafficking

THB–INF (2013)2

PREMS 231913 – ARM – © Conseil de l'Europe – Photographies © Shutterstock